ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 54 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի ԹԻՎ 16-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 13-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 16-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1.1.1 տողը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Հոգեբանական աջակցության և բժշկական ապահովման վարչություն»:

2) «1.1.1 Ընդամենը 0-0-14-13-0-1-28» տողից առաջ ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր աղյուսակ. «

1.1.1.3 Հոգեբանական աջակցության բաժին						
1	բաժնի պետ	փրկարարական ծառայող	գնդապետ	1		36
2	ավագ հրահանգիչ	փրկարարական ծառայող	փոխգնդապետ	1		29
3	հրահանգիչ՝ հոգեբան	փրկարարական ծառայող	մայոր	6		24
4	հրահանգիչ	փրկարարական ծառայող	մայոր	1		24
5	կրտսեր հրահանգիչ	փրկարարական ծառայող	ավագ ենթասպա	3		9/5
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ 0-0-9-3-0-0			12		

»

3) «1. 1. 1 Ընդամենը 0-0-14-13-0-1-28» տողում «14» թիվը փոխարինել «23» թվով, «13» թիվը «16» թվով, «28» թիվը փոխարինել «40» թվով:

4) 1. 1. 21 կետով նախատեսված աղյուսակը ճանաչել ուժը կորցրած:

2. Հրամանը ծանոթացնել ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

25.07.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ